

կ'աւելնան հունգար վարժապետներ ալ: Ու քիչ յետոյ կ'աւելցուի լատիներէնի դաս: :

Դպրոցը կը վարէին Անտոնեան Հայրերը, Մխիթարեանց ենթակայ, իսկ վերատեսուէն էր Նղիսարէթուպոլսոյ ժողովրդապետը՝ անուանուած կայսեր կողմէ: Թրանսիլվանիոյ Կանոնիկոսական ժողովը, Գարլսպուրկի մէջ, 1775 Յունիս 17-ին դժելով անոնց իրաւասութիւնները կ'որոշէ ի միջի այլոց որ «ուսանողը՝ կիրակի եւ տօն օրերը՝ ժողովրդապետական եկեղեցին զրկուին պատարագ տեսնելու եւ քարոզ լսելու: Վասնզի պատշաճ եւ վայելուչ է որ տղաք, որ եկեղեցին որ ծնած են ի հոգեւորս, այն եկեղեցւոյն մէջ աճին...: Զէ թէ միայն հարուստներուն հապա նաեւ աղքատներուն տղաքն ալ հաւասար փութով եւ սիրով ընդունուին ու դաստիարակուին»:

Դպրոցին չուրջ երկար տարիներ կը տեւեն վէճերը մէկ կողմէ Անտոնեան Հայրերուն եւ միւս կողմէ քաղաքային վարչութեան կողմէ, — տեսակ մը իրաւասական վէճ որ բացասական արդիւնք կ'ունենայ, պատճառ դառնալով ի վերջոյ, որ, 1820-ի ատենները, երկու դպրոց գոյութիւն ունենայ, մէկը Մխիթարեանց վանքին մէջ, միւսը քաղաքը: Առաջինին մէջ տղաք կը սորվին հայ լեզուն եւ կրօնը, իսկ միւսին մէջ՝ հունգարերէն եւ լատիներէն:

1820 Մայիս 2-ին կը բացուի գերմաներէն դասարան մըն ալ:

Հայր Մինաս Բժշկեան, որ նոյն ատենները անցած է Թրանսիլվանիայէն կ'ըսէ Նղիսարէթուպոլսոյ համար թէ «երեւելի են դպրոցք քաղաքիս, ուր ձրի ուսանին մանկունք հայերէն, լատիներէն, գերմաներէն եւ մաճառերէն» (Համապարիսկոպիւն, էջ 195):

1827-ը բացառիկ կարեւորութիւն ունի Նղիսարէթուպոլսոյ հայ տարեգրութեանց համար: Նոյն տարին Աղեքսանդր Ռափայէլեան, Մատրասցի մեծահարուստ հայր, 5000 Փիօրիկ կը դետեղէ քաղաքային վարչութեան արկղը, եւ 6 առ հարիւր տոկոսով, գործածուելու համար «սարգապէս ու միմիայն Նղիսարէթուպոլսոյ հայ օրիորդաց դաստիարակութեանն, անոնց կրօնական ու բարոյական ուսմանց»:

Բարերարը, 14 տարի յետոյ, այսինքն

1841-ին, 2000 Փիօրիկի նոր նուիրատուութեամբ մը բնակարան մը կը գնէ աղջկանց վարժուհիին համար, եւ մասնաւոր նամակով մը կը պատուիրէ որ հոգ տարուի աղջկանց սորվեցնելու հայ լեզուն, ու անկէ յետոյ միայն ուրիշ լեզու եւ գիտութիւն:

1848-ի յեղափոխութեան եւ անոր յաջորդող օրերուն տագնապ մը կ'անցնէ Ռափայէլեանի հիմնած աղջկանց դպրոցն ալ՝ մինչեւ որ 1851 Մայիս 28-ին վերին կառավարութիւնը հրաման կուտայ վերաբանալ դպրոցը:

1851-1865 դպրոցը կ'ունենայ երկու կարգ, ու յետոյ կը վերածուի չորս դասարանի, իսկ 1879-ին կ'ունենայ վեց կարգ:

1880-էն յետոյ կը սկսի դեղեւիլ աղջկանց կրթութեան գործը, իսկ 1885-ին դպրոցը կ'անցնի Սատմարի Ս. Վիկենտիոսի կարգին մայրապետներուն, մասնաւոր պայմանագրութեամբ մը, ուր մայրապետները յանձն կ'առնեն տղաքը դաստիարակել «Նղիսարէթուպոլսոյ հասարակութեան քմացն ու բաղձանացը համեմատ»:

* * *

Մտահոգութեան առարկայ կը դառնայ նաեւ ԺԹ. դարու սկիզբը մանչոց դպրոցի վիճակը: Նիւթականն է որ նախ կը մտատանջէ հասարակութիւնը: Կը գտնուի սակայն սրբուցաւ հայ մը, Սիմոն Մարգովիչեան, որ յանձն կ'առնէ նոյն իսկ մուրալով դրամ հաւաքել եւ թէ անհրաժեշտ արտօնութիւնը տրուի: 1819 Նոյեմբեր 27-ին քաղաքը կուտայ ինդրուած յանձնարարականը: Անձանօթ կը մնայ սակայն այս առաջին փորձին արդիւնքը: 1823-ին հանգանակութեան նոր ձեռնարկ մը կ'ընէ ժողովրդապետ Յովհաննէս Քապուէպովիան, բայց մինչեւ 1829՝ 3240 Փիօրիկ միայն կրնայ հանգանակել:

1835-ին է որ կը սկսի վերածաղկիլ կրթական գործը: Այդ տարին հրատարակուած կանոնադրութիւնը կ'ըսէ թէ դպրոցական տարին կը սկսի Նոյեմբեր 1-ին եւ կը վերջանայ Յուլի վերջին օրը. աշակերտները պարտաւոր են ամէն օր պատարագ լսել, երբ փոխն ի փոխ հունգարերէն եւ լատիներէն երգեր կ'երգուին, եւ հաղորդուիլ տարին չորս անգամ: Առտուն ժամը 7½-8 սերտողութեան ժամ է, իսկ 8-10